Պարույր Սևակ

Անվերնագիր 25

Ոչի՛նչ, ոչի՛նչ չի պատահել արտասովոր.
Դու նույն աղջիկն ես հմայիչ, ես՝ նույն տղան,
Միայն՝ ժպտում են աչքերդ կարծես ցավով,
Եվ այս ճամփան էլ չի թվում այնպես խաղաղ:
Ոչի՛նչ, ոչի՛նչ չի կատարվել նկատելի.
Ո՛չ խարդավանք, ո՛չ խանդ, և ո՛չ կասկած մի կույր.
Լոկ զգում եմ ես համրախոս քո մատներից,
Որ ինձ այսօր նրանք ինչ-որ սա՛ռն են զգում.
Եվ չի փոխվել ոչինչ նաև կյանքո՛ւմ կարծես.
Ամառային նույն արևն է և նույն փոշին:
Ես զգում եմ՝ ինչ չգիտես ինքդ էլ գուցե.
-Դադարե՛լ ես ինձ սիրելուց,
Բայց... չես սիրում դեռ ուրիշին:

03.II.1947թ.
Երևան